

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 2793
02 AUG 2021
Կից Նշում

« 30 » հուլիս 2021 թ No 2914 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ «ՎԱԼԵՆՏԱ ՖԱՐՄ ԲԸ, 141101, ՄՈՍԿՎԱՅԻ ՇՐՋԱՆ,
ՇԵԼԿՈՎՈ, ՖԱՐՄԻՉՆԱՅԱ Փ., 2» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՎԱԼԵՆՏԱ
ՖԱՐՄ ԲԸ, 141101, ՄՈՍԿՎԱՅԻ ՇՐՋԱՆ, ՇԵԼԿՈՎՈ, ՖԱՐՄԻՉՆԱՅԱ Փ., 2,
ՌՈՒՍԱՍՏԱՆ») «ԻՆԳԱՎԻՐԻՆ (ՊԵՆՏԱՆԴԻՈԱԹԹՈՒ (ՊԵՆՏԱՆԴԻՈԱԹԹՎԻ
ԻՄԻԴԱՋՈԼԻԼ ԷԹԱՆԱՄԻԴ)) ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ 90ՄԳ; (7/1X7/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ
(10/1X10) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ
ՀԱՋՈՐԴ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵՎԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 2-ի 15-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 15.07.2021 թվականի N 0103069321 բացասական եզրակացությունը՝ Ռուսաստանի «Վալենտա Ֆարմ ԲԸ, 141101, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2» դեղագործական ընկերության արտադրության (Դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Վալենտա Ֆարմ ԲԸ, 141101, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2, Ռուսաստան») «Ինգավիրին (պենտանդիոաթթու (պենտանդիոաթթվի իմիդազոլիլ էթանամիդ)) դեղապատիճներ 90մգ; (7/1x7/) բլիստերում (10/1x10) բլիստերում» Հայաստանի Հանրապետությունում դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 15652/5 առ 15.07.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի ներկայացված լրացուցիչ փաթեթավորումը (N 10) չի համապատասխանում բուժման շարունակական ռեժիմին: Քանի որ նոր ներկայացված բուժման շարունակական ռեժիմը մերժվել է, ուստի N 10 փաթեթավորման գրանցումը անպատակահարմար է.

Աստվ. 02.08.21 Վ. 09¹⁵ Բ

1. Մերժել Ռուսաստանի «Վալենտա Ֆարմ ԲԸ, 141101, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2» դեղագործական ընկերության արտադրության (Դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Վալենտա Ֆարմ ԲԸ, 141101, Մոսկվայի շրջան, Շելկովո, Ֆաբրիչնայա փ., 2, Ռուսաստան») «Ինգավիրին (պենտանդիոաթթու (պենտանդիոաթթվի իմիդազոլիլ էթանամիդ)) դեղապատիճներ 90մգ; (7/1x7/) բլիստերում (10/1x10) բլիստերում» Հայաստանի Հանրապետությունում դեղի հաջորդ թողարկման ձևի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

30.07.2021

X 

ԱՆՆԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157